«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝Զարյա Ղուլյան

Ուսումնական հաստատություն՝ Վաղարշապատի Մ.Գորկու անվան հմ.5 ավագ դպրոց, ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3
Գլուխ 1 ---------- 4
1.1 Գնահատում ---------- 4
1.2 Միավորային և ուսուցանող և գնահատում ---------- 5
1.3 Ինքնագնահատման մշակույթի ձևավորումն ու զարգացումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ---------- 12
Գլուխ 2 ---------- 15
2.1 Ժողովրդավարական մշակույթային կարողունակությունների/ԺՄԿ/ գնահատում ---------- 15
2.2 ԺՄԿ գնահատման սկզբունքները---------- 16
Եզրակացություն ---------- 20
Գրականության ցանկ ---------- 20

Ներածություն

Մարդկության բնավորությանը հատուկ է
ըստ արժանվույն գնահատված լինելու ձգտումը

Ուիլյամ Ջեյմս

Դիդակտիկայի նորագույն նվաճումները, հանգելով մանկավարժական նոր տեխնոլոգաների արդյունավետ կիրառման հիմնախնդիրներին, ենթադրեցին մանկավարժների նորովի վերապատրաստման անհրաժեշտություն, և այդ փուլը կարծես հաղթահարված է շատ մանկավարժների կողմից: Այսօր շատ մանկավարժներ են աշակերտակենտրոն դասեր վարում նոր տեխնոլոգիաների ու ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ: Սակայն ուսուցման գործընթացում մի շատ կարևոր բաղադրիչ՝ գնահատումը, դեռ մնում է ստվերում: Եթե հաշվի առնենք նաև մաթեմատիկայի ուսուցման մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես, դասագրքի համարյա բոլոր վարժությունների ու խնդիրների լուծման ընթացքում սովորողը ձեռք է բերում մի նոր գիտելիք, հետևաբար դասի ընթացքում գիտելիքի յուրացման համարյա բոլոր փուլերում աշակերտը կարող է և մնալ չգնահատված: Ուստի կարևոր է ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը և այն ներդնելը, քանի որ ուսումնական ողջ գործընթացն ուղեկցվում է գնահատման համակարգի կիրառմամբ, որն էլ իր հերթին ենթադրում է ուսուցչի կողմից սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգերին տիրապետելու անհրաժեշտություն՝ շեշտադրելով գնահատման տարբեր գործիքակազմերի, այդ թվում՝ ձևավորող գնահատմանը:

Այսպիսով պետք է ձևավորվի համոզմունք, որ անհրաժեշտ է ուսուցման գործընթացում գիտելիքների, ունակությունների, հմտությունների գնահատումից անցնել ըստ կարողունակությունների գնահատմանը:

Գլուխ 1

1.1. Գնահատում

Գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների կարողունակությունների ստուգումն է, ինչպես նաև՝ ուսման որակի բարելավումն ու վերահսկումը:

Գնահատումը կարող է լինել **օբյեկտիվ** կամ **սուբյեկտիվ**: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները կամ որոշ գործնական աշխատանքներ:

Գնահատման հիմնական նպատակները, սկզբունքները և գործառույթները սահմանվում են հանրակրթության պետական կրթակարգում: Ուլորտը պայմանականորեն տարանջատվում է ներքին և արտաքին գնահատումների:

Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների ստուգման միջոցով, դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի (դասարանի) ձեռք բերած կարողունակությունները, այլև նրա (դասարանի) զարգացման ընթացքը:

Արտաքին գնահատումն իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Արտաքին ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելության մրցույթին մասնակցելու համար:

Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակն առանձին դպրոցում, մարզում կամ հանրապետության ամբողջ տարածքում (ազգային գնահատում): Արտաքին գնահատման առանձին տեսակ է

միջազգային գնահատումը, որն իրականացվում է միջազգային ստուգատեսների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության մասնակցության դեպքերում:

Սովորողի պատրաստվածության մակարդակն ու նրա անձնային-անհատական որակները որոշելու համար գնահատվում են՝ չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացումը, սովորածը գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները, մտավոր գործունեության մակարդակը:

Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Ըստ նպատակադրման կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը՝

ա. ընթացիկ գնահատում (ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը),

բ. ամփոփիչ գնահատում (ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանը),

գ. հայտորոշիչ գնահատում (ճշգրտվում է ուսումնական նյութի յուրացման տարրապատկերը),

դ. ձևավորող գնահատում (ճշգրտվում են դասավանդվող նյութի բովանդակությունը, ծավալը, խորությունը, ուսումնական նյութը յուրացնելու նվազագույն շեմը, դասավանդման մեթոդները),

ե. հետազոտական գնահատում (հետազոտվում են ուսումնական գործընթացի կազմակերպումը և ուսուցման արդյունքները):

Հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնառության արդյունքները գնահատելու համար նախարարության կողմից սահմանվում է պարտադիր ամփոփիչ գնահատման կարգը:

Գնահատումն իրականացվում է գրավոր կամ բանավոր՝ հարցման, առաջադրանքի և գործնական աշխատանքի կատարման ստուգման, հարցարանի լրացման, ստուգարքի, քննության և այլ միջոցներով:

Գնահատման անցկացման, արդյունքների ամփոփման և հանրությանը դրանց մասին իրազեկման կարգը մշակվում և հրապարակվում է գնահատումից առաջ՝ գնահատումն իրականացնող անձի (մարմնի) կողմից:

1.2 Միավորային և ուսուցանող և գնահատում

Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է <<**Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է**>>: Այսպիսով, միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական

կարողունակությունները: Միավորային գնահատման հիմնական կիրառվող տեսակներն են.

- բանավոր հարցում,
- գործնական աշխատանք,
- թեմատիկ աշխատանք,
- ամփոփիչաշխատանք:

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել սովորողի կարողունակությունները, որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:

Միավորային գնահատումը իրականացվում է 10 միավորային սանդղակով: Եթե գնահատման համար ընտրվում է այլ սանդղակ, ապա պաշտոնական գրանցման համար այդ սանդղակով ստացված միավորները պետք է բերել 10 միավորային սանդղակի՝ օգտվելով համապատասխան բանաձևից:

Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման 10 միավորային սանդղակի միավորների բնութագրիչները ներկայացվում են ստորև: Ամբողջական նյութը կարելի է գտնել «Կարգ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների», ՀՀ ԿԳ նախարարի 2014թ. հունվարի 21-ի N37-Ա/Ք հրամանի հավելվածում(տես՝ ԿԱԻ-ի կայքում):

- **1 միավոր** – չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:
- **2 միավոր** – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
- **3 միավոր** – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
- **4 միավոր** – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրությունում այն կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- **5 միավոր** - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ

իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:

- **6 միավոր** - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- **7 միավոր** - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար միջնորդավորված քայլ կատարելու կարողություն, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- **8 միավոր** - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, միջնորդավորված քայլ, պարզ արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է ճանաչել տեղեկատվության կազմությունն ու կառուցվածքը, տրոհել այն մասերի և տեսնել այդ մասերի միջև եղած կապերը:
- **9 միավոր** - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կողմնորոշման և կատարման համար ինքնատիպ մոտեցում, հատուկ մեթոդներ, միջնորդավորված քայլ, արտածում, հիմնավորում պահանջող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար կարողանում է օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել ու վերլուծել ձեռք բերած տեղեկությունը:
- **10 միավոր** - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն պահանջող, կողմնորոշման և կատարման համար բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, հատուկ մեթոդներ, արտածում, հիմնավորում, կռահում ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն: Կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից, հավաքել, համադրել, ամփոփել ձեռք բերած գիտելիքն ու տեղեկությունը:

Վերևում նշված 10 միավորային սանդղակը հիմք է հանդիսանում յուրաքանչյուր ուսումնական առարկայի 10 միավորային գնահատման սանդղակի միավորների բնութագրիչների մշակման համար՝ հաշվի առնելով տվյալ ուսումնական առարկայի չափորոշիչը:

Միավորային գնահատում իրականացվում է նաև ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

Կարևորում եմ սանդղակի մտապահումը, որի համար առաջարկում եմ բանալի բառերի դուրս բերումը: Առաջարկում եմ այդպիսի մի տարբերակ, որին հանգեցինք վերապատրաստման ընթացքում.

Գնահատական	Բանալի բառեր
1-3	պատրաստակամություն
4	նվազագույն շեմի հաղթահարում
5	ոչ բարդ հիմնավորում
6	նվազագույնի լիարժեք իմացություն
7	հիմնավորում
8	ինքնատիպ
9	անծանոթ միջավայր
10	ստեղծագործական

Ուսուցանող/Ձևավորող գնահատումը միավորներով արտահայտվող գնահատում չէ և այն կիրառվում է տվյալ թեմայի ուսուցման ցանկացած պահին՝ սովորողի կարողունակությունները հայտորոշելու/ախտորոշելու, ուսուցման գործընթացը խթանելու, հետագա անելիքները պլանավորելու նպատակով: Այն իր էությամբ ավելի շատ է կողմնորոշված դեպի կոնկրետ սովորողը, ներառում է ուսուցիչ-աշակերտ և ուսուցիչ-ծնող մշտական փոխհամագործակցության տարրեր: Ձևավորող գնահատումը ենթադրում է անընդհատ դիտարկումներ, որոնք ուսուցիչն իրականացնում է հետադարձ կապի միջոցով և որի միջոցով որոշվում է, թե որքանո՞վ է աշակերտն ի վիճակի կատարել հանձնարարված ուսումնական առաջադրանքը և հստակեցվում է առաջադրանքի այն մասը, որը սովորողը չի կարողանում կամ դժվարանում է կատարել: Դիտարկումների արդյունքներն էլ հենց թելադրում են յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության գործընթացի հետագա քայլերը և մոտեցումները:

Ուսուցման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է ընթացիկ վիճակի ճիշտ ախտորոշմամբ՝ հայտորոշմամբ: Հայտորոշման դերը բարձր է ոչ միայն ուսումնական աշխատանքներում, այլ նաև ցանկացած աշխատանք որակով անելու դեպքում: Հայտորոշման կարևորությունը մարդիկ հաճախ տեսնում և զգում են՝ հատկապես բժշկության ասպարեզում: Բժշկության մեջ բժշկի գլխավոր խնդիրը հիվանդության ճիշտ ախտորոշումն է, որից հետո, միայն, որոշվում է բուժման ճիշտ ճանապարհը:

Կրթության ոլորտում հայտորոշիչ ուսումնասիրման նպատակն է՝ պարզել դասավանդված ուսումնական նյութի կամ հմտության յուրացման մեջ սովորողի կամ ուսուցչի ձեռքբերումները, թերացումները, թերություններն ու սխալները, որն էլ հենց կատարվում է ձևավորող գնահատման միջոցով:

Կախված այն բանից, թե ինչը ինչ ծավալով և խորությամբ է անհրաժեշտ հայտորոշել, կարելի է օգտագործել տարբեր միջոցներ, որոնցից են հայտորոշիչ թեստը, բանավոր հարցումը, տնային աշխատանքը և այլն:

Ուսուցանող գնահատման մի հատուկ տեսակ է **հայտորոշիչ թեստը**: Դրա նպատակն է՝ որոշել, թե արդյո՞ք սովորողը պատրաստ է շարունակելու հետագա ուսումնառությունը: Հայտորոշիչ թեստի նպատակը ոչ թե ընդհանուր պատկերացումներ ունենալը, կամ աշակերտներին ըստ գիտելիքների խմբերի բաժանելն է, այլ յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերի պարզելը: Հայտորոշիչ թեստը կարևոր է թե՛ ուսուցչի և թե՛ աշակերտի համար, քանի որ դրա արդյունքների հիման վրա ուսուցիչը պարզում է իր ուսուցանելու որակն ու արդյունավետությունը, իսկ աշակերտն իր ուսումնառության ընթացքը:

Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են՝

- կարճ ժամանակի համար է նախատեսված՝ 15-20րոպե
- առաջադրանքները ձևակերպվում են պարզ, կարճ, մատչելի,
- արագ է ստուգվում և արժևորվում,
- բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն կարողունակության ստուգմանը,
- առաջադրանքները միջին բարդության աստիճան ունեն (1ին և 2-րդ մակարդակ), այնպիսին են, որ դրանք հաղթահարելի են սովորողների մեծ մասի համար,
- կատարման համար ժամանակի պակաս չի զգացվում,

- արդյունքները հեշտ վերլուծելի են,
- արդյունքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,
- առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
- արդյունքները վերլուծելով և մեկնաբանելով՝ որոշվում է աշակերտների հետ հետագա անելիքները:

Հայտորոշիչ թեստը չի նախատեսվում օգտագործել հաշվետվության նպատակով, այլ այն ունի սովորողի հետ հետադարձ կապի միջոցով ուսումնական նյութի յուրացման աստիճանը բարձրացնելու նպատակ: Այդ պատճառով հայտորոշիչ թեստի գնահատման մոտեցումներն էապես տարբեր պետք է լինեն մրցակցային բնույթի թեստերի արդյունքների գնահատումից: Հայտորոշիչ թեստի արդյունքները սովորաբար միավորով չեն գնահատվում, դրա արդյունքներն ուսուցիչը վերլուծում, մեկնաբանում և քննարկում է՝ ըստ անհրաժեշտության, յուրաքանչյուր սովորողի հետ: Գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուցչի հետևությունները, մեկնաբանությունները: **Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը, նկատված բացթողումները:**

Ուսուցանող նպատակով **բանավոր հարցումն** օգնում է ուսուցչին բացահայտելու, թե աշակերտն ի՞նչ գիտի և ի՞նչ կարող է անել: Բանավոր հարցման դեպքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

- վերլուծել աշակերտի պատասխաններն ու հարցերը, որպեսզի բացահայտվի, թե ինչ գիտի աշակերտը, ինչպես է հասկանում և ինչ կարող է անել,
- հարցերն օգտագործվեն՝ աշակերտների հատկանշական թերըմբռնումները պարզելու և հետագա ուսուցումը բարելավելու համար,
- աշակերտի հարցերն օգտագործվեն նրա ըմբռնողունակությունը գնահատելու նպատակով:

Այդ նպատակներն իրագործելու համար շատ կարևոր է գտնել և օգտագործել առավել արդյունավետ հարցեր և նպատակին հասնելու ձևեր:

Բանավոր հարցման միջոցով կարելի է պարզել ուսուցանված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի տիրապետման աստիճանը: Դա կարելի է անել առանձին աշակերտների հարցմամբ կամ դասարանին ուղղված հարցով: Այդ միջոցներով պարզվում են սովորողների լեզվամտածողությունը, տրամաբանությունը, հաղորդակցվելու, արագ կողմնորոշվելու կարողությունները: Վիճակը ճշտելուց հետո ուսուցիչը պլանավորում է նկատված թերությունները վերացնելու հետագա

անելիքները: Բանավոր հարցումներն օգտակար են հատկապես ուսումնական նոր նյութն աշակերտներին բացատրելուց հետո:

Աշակերտի ձեռքբերումների ճիշտ արժևորման համար կողմնորոշիչ հարցեր տալուց զատ, շատ կարևոր է աշակերտի պատասխաններն ուշադիր լսելը և դրանց մեկնաբանելն ու վերլուծելը: Երբեմն աշակերտի տված հարցերից կարելի է հետևություններ անել, թե որքանով է նա կարողացել հասկանալ ուսումնական նյութը, ինչն է բնորոշ նրա թերըմբռումներում:

Սովորելը խթանելու արդյունավետ միջոց է **տնային աշխատանքների** դերի բարձրացումն ու դրանց նկատմամբ մոտեցումների ճշգրտումն ու համակարգումը: Սովորողն իր անհատական կամ համագործակցային աշխատանքները կատարում է նաև տանը: Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները: Տնային հանձնարարությունները պետք է լինեն այնպիսի ծավալի, որ դրանց կատարման համար աշակերտը ծախսի միջին հաշվով շաբաթական ժամաքանակի կեսից ոչ ավելին: Տնային աշխատանքը նպաստում է սովորողի ինքնուրույն և խմբային աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Տնային աշխատանքների ստուգումը, քննարկումն ու վերլուծությունը պետք է արվեն հնարավորինս հաճախ, քանի որ դա կօգնի աշակերտին լավ յուրացնել տվյալ ուսումնական նյութը և հետագայում ինքնուրույն վերացնել ի հայտ եկած թերությունները:

Տնային աշխատանքը կարելի է երբեմն գնահատվել միավորով, եթե այն ստուգվում է բանավոր հարցմամբ և միավորը գրանցվում է որպես բանավոր հարցման գնահատական:

Այսպիսով, ձևավորող գնահատումը ուսուցիչների և սովորողների կողմից իրականացվող այն համատեղ աշխատանքն է, որը հենվելով դիտարկումների արդյունքում ձեռք բերված վիճակագրական տվյալների վրա՝ ուղղորդում է կրթության բովանդակությունը՝ դասավանդումը և ուսումնառությունը դարձնելով առավել արդյունավետ և նպատակային: Այն հետադարձ կապով սովորողին, ինչպես նաև նրա ծնողին, սովորողի առաջադիմության ընթացքի մասին մշտական տեղեկատվություն տրամադրելու համար միջոց է և բացահայտում է, թե ի՞նչ է սովորողը յուրացրել, ո՞ր հարցերում թերացել: Հետադարձ կապի մշտական առկայությունը շահագրգռում է սովորողին դիմել իր թերացումները շտկող և իմացական մակարդակը բարձրացնող գործողությունների, հանգելու օբյեկտիվ **ինքնագնահատականի**:

2.3. Ինքնագնահատման մշակույթի ձևավորումն ու զարգացումը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում

Գնահատման գործընթացի ճիշտ կազմակերպումով է հաճախ պայմանավորված համագործակցային ուսուցման արդյունավետությունը, քանի որ համագործակցային ուսուցումը կենտրոնանում է աշխատանքային հմտությունների գնահատման, քննարկման և բարելավման վրա, ինչը նպաստում է յուրաքանչյուրի մասնակցության ապահովմանը: Հակառակ դեպքում գործընթացը կվերածվի ավանդական խմբային աշխատանքի:

Գնահատման գործընթացքում ներմուծենք հետևյալ ճյուղավորումը (Նկար 1).

Նկար 1

Այս երեք բաղադրիչները պետք է լինեն ոչ թե իրարից խիստ առանձնացված, այլ մեկ մարմին՝ գործեն միասին միմյանց լրացնելով: Այլապես կգործեն ուսուցման մեջ ավանդաբար որդեգրված անհատական և մրցակցային մոտեցումները, ուսուցչի ստեղծագործելու հնարավորությունները կլինեն սահմանափակված: Դասավանդման և ուսումնառության մեջ կառանձնանան երկու հիմնական սկզբունք՝ գիտելիքների ձեռքբերում (հաճախ նաև/միայն/ անգիր անելով) և գնահատում, ընդ որում վերջինս երբեմն վերածվում է կամ խրախուսման միջոցի կամ զուտ պատժամիջոցի: Սովորողների մասնակցությունը ուսուցման ընթացքում հիմնված է լինում հետևյալ սկզբունքի վրա. «Լավ սովորողները քաջալերվում են և ավելի են առաջադիմում, մյուսները ինքնամեկուսացվում են և ավելի թուլանում»:

Վերադառնանք **ինքնագնահատման բաղադրիչին**: Ինքնագնահատման մշակույթի առաջին քայլերը կարելի է սկսել մաթեմատիկական թելադրությունների միջոցով (այն շատ արդյունավետ միջոց է): Նախօրոք մշակվում է մաթեմատիկական թելադրության տեքստը. ուսուցիչը պետք է «ձեռքի տակ ունենա թելադրության բոլոր հարցերն ու նրանց պատասխանները: Նախքան թելադրությունը սկսելը աշակերտներին է ներկայացվում գնահատման սանդղակը: Օրինակ՝.

Ճիշտ է՝ 1 միավոր, սխալ է՝ 0 միավոր, չգիտեմ՝ 0 միավոր:

Գնահատման սանդղակի ստեղծումը կախված է թելադրության տեքստում ընդգրկված հարցերի բնույթից:

Հարցերը պետք է լինեն բանավոր բնույթի (հարցը ընկալվի առանց որևէ գրավոր նշում կատարելու):

Թելադրության ժամանակ հարցը կարդացվում է դանդաղ, ընդ որում միան մեկ անգամ: Տրվում է ժամանակ 0,5-1 րոպե (դարձյալ կախված է հարցի բարդության աստիճանից): Մտածելու և գրանցելու համար չի կարելի տալ երկար ժամանակ:

Ներկայացնենք մաթեմատիկական թելադրության տեքստը.

Թեմա. «Ուղիղները և հարթությունները տարածության մեջ»

1. *Ցանկացած երեք կետերով անցնում է միայն մեկ հարթություն: (Պատ. ՈՉ)*
2. *Եթե a ուղիղը զուգահեռ է b ուղղին, իսկ b ուղիղը զուգահեռ է α հարթությանը, ապա a ուղիղը զուգահեռ է α հարթությանը: (Պատ. ՈՉ)*
3. *Եթե երկու ուղիղներ զուգահեռ են միևնույն հարթությանը, ապա դրանք զուգահեռ են: (Պատ. ՈՉ)*
4. *Եթե α հարթությունը զուգահեռ է β հարթությանը, β հարթությունը զուգահեռ է γ հարթությանը, ապա α հարթությունը զուգահեռ է γ հարթությանը: (Պատ. ԱՅՈ)*
5. *Տարածության ցանկացած կետով անցնում է այդ հարթությանը ուղղահայաց միակ հարթություն: (Պատ. ՈՉ)*
6. *Եթե a ուղիղը հատում է b և c ուղիղներից մեկը, ապա մյուսը ևս հատում է: (Պատ. ՈՉ)*
7. *Եթե AB և CD ուղիղները խաչվող են, ապա AC և BD ուղիղները ևս խաչվող են: (Պատ. ԱՅՈ)*

8. *Նույն հարթությանը զուգահեռ ուղիղները զուգահեռ են: (Պատ. ՈՉ)*
9. *Երկու զուգահեռ հարթություններ երկու զուգահեռ հարթություններով հատելիս առաջանում են չորս ուղիղներ, որոնք զույգ առ զույգ զուգահեռ են: (Պատ. ԱՅՈ)*
10. *Եթե ուղիղը ուղղահայաց չէ հարթությանը, ապա այն ուղղահայաց չէ այդ հարթության յուրաքանչյուր ուղղի: (Պատ. ՈՉ)*

Թելադրությունն ավարտելուց հետո ևս մի անգամ կարդացվում են հարցերը՝ արագ, ստուգելու նպատակով: Հայտարարվում է, որ պատասխանում ջնջում անել չի կարելի, իսկ եթե ջնջում է թույլ տրվել, ապա այդ մասին նախօրոք տեղյակ պահել ուսուցչին: Այնուհետև ուսուցիչը արագ անցնելով շարքերով, ստուգում է աշխատանքները՝ կատարելով որոշակի նշումներ: Այդ նշումների միջոցով ուսուցիչը պետք է կարողանա իր համար պարզել որոշ աշակերտների ոչ անկեղծ գտնվելը, որն ինքնագնահատման սկզբնական փուլում սովորաբար առկա է լինում: Հաջորդ փուլում ուսուցիչը կարդում է ճիշտ պատասխանները, իսկ աշակերտներից յուրաքանչյուրն <<+>>,<<->> նշաններով իր աշխատանքը հաշվարկում և գնահատում է: Գնահատման վերջին փուլում ուսուցիչը մեկ անգամ ևս արագ վերանայում է աշխատանքները և հայտարարում գնահատականները: Աստիճանաբար պետք է հասնել նրան, որ աշակերտները անազնվություն թույլ չտան և աշխատանքը բոլորի համար լինի հետաքրքիր (դրա համար յուրաքանչյուր ուսուցիչ ունի իր բանաձևը):

Միմյանց գնահատման բաղադրիչի մշակույթի ձևավորման համար նորից կարելի է կիրառել մաթեմատիկական թելադրություն, միայն այն տարբերությամբ, որ ստուգման փուլում աշակերտները զույգերով փոխանցում են միմյանց կատարած աշխատանքերը: Սկզբնական փուլում կարելի է կիրառել հետևալ մեթոդական հնարը: Դասի վերաբերյալ տեսական գիտելիքների ստուգման և գնահատման նպատակով ուսուցիչը հանձնարարում է զույգերով միմյանց շշուկով հարցեր տալ և գնահատել: Տրվում է ժամանակ և սահմանվում է, թե այդ ընթացքում զույգը ամենաքիչը քանի հարց պետք է սպառի (հարցը սպառել նշանակում է հարցնել, պատասխանը լսել և գնահատել): Ժամանակը լրանալուց հետո պատահական ընտրվում է զույգ, որը պետք է ներկայացնի, թե քանի հարց է սպառվել և ինչ գնահատականներ են ստացել: Եթե գնահատումը կատարվել է օբյեկտիվ, ավելանում է ևս մեկ միավոր, իսկ եթե ոչ օբյեկտիվ է, գիտելիքի գնահատման օբյեկտիվ արդյունքից հանվում է մեկ միավոր (գնահատման սկզբնական փուլում երբեմն որոշ աշակերտներ իրենց ընկերոջը ավելի բարձր են գնահատում):

Գլուխ 2

2.1 Ժողովրդավարական մշակույթային կարողունակությունների գնահատում

ԺՄԿ ուսուցումը, ուսումնառությունն ու գնահատումը պետք է դիտել որպես մի շաղկապված գործընթաց: Ուսուցման և ուսումնառության մեթոդները պետք է համապատասխան լինեն այն կարողունակությունների զարգացմանը, որոնք ցանկանում ենք գնահատել: Համագործակցային հմտություններն, օրինակ, կարելի է լավագույնս զարգացնել այնպիսի ուսումնական աշխատանքների միջոցով, որոնք թույլ են տալիս՝ նաև խրախուսում են սովորողներին համագործակցել: Սա նշանակում է, որ համագործակցությունը պետք է լինի գնահատման մի մաս:

Այլոց հետ փոխշփվելու, քննարկումներում ներգրավվելու և որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունները ստեղծում են այն համատեքստերը, որտեղ համագործակցային հմտությունները կարող են դրսևորվել սովորողի կողմից և դիտարկվել՝ գնահատողի կողմից: Երկրորդը՝ ուսուցման և գնահատման մեթոդաբանուփյունների փոխկապվածությունն է:

Օրինակ՝ համագործակցային ուսուցման մեթոդի վրա հիմնված ուսումնական բաժնին կարող է հաջորդել այնպիսի գնահատում, որի միջոցով սովորողների՝ իրենց սեփական ձեռքբերումների վերաբերյալ անհատական հետահայաց վերլուծությունները, կարելի է մեկտեղել համադասարանցիների գնահատման հետ՝ փոխաջակցության և վստահության մթնոլորտը պահելու նպատակով:

Ապրումակցումը և հարգանքը զարգացնելու նպատակով հարկ է, որ սովորողներն ունենան իրենց՝ «դիմացինի տեղը կամ վիճակում» դնելու հնարավորություն և այնուհետև սա տեղեկություն կապահովի գնահատման պրակտիկայի համար:

Այսպիսով՝ **գնահատումը պետք է**

առաջին՝ սովորողին հնարավորություն տա հետահայաց վերլուծել ուսումնառության գործընթացը,

երկրորդ՝ սովորողների հնարավորություն ընձեռի համապատասխան ճիշտ գործողություն ձեռնարկել իրենց ուսման մեջ,

երրորդ՝ գնահատմամբ պետք է որոշվվի, թե ինչ է անհրաժեշտ կարողունակությունների հետագա զարգացման համար:

Այլ կերպ ասած՝ գնահատումը պետք է նպաստի սովորողների՝ իրենց իսկ ուսման գործընթացի տերը լինելու զգացողության ձևավորմանը:

2.2. ԺՄԿ / Ժողովրդավարական մշակույթային կարողունակությունների գնահատման սկզբունքները

Որպեսզի ուսմանը տրված գնահատականներն ընդունելի լինեն սովորողների համար, իսկ երիտասարդ սովորողների պարագայում՝ նրանց ծնողների կամ խնամակալների համար, կարևոր է, որ դրանք համապատասխանեն մի շարք չափանիշների: Այդ չափանիշներից են վավերությունը, հուսալիությունը, հավասարությունը, թափանցիկությունը, իրագործելիությունը, հարգալից վերաբերմունքը:

Վավերություն նշանակում է, որ գնահատումը պետք է ճշգրտությամբ նկարագրի և/կամ չափի սովորողների կողմից նախատեսվող կրթական վերջնարդյունքների տիրապետման կամ ձեռքբերման աստիճանը, այլ ոչ՝ որևէ այլ չնախատեսված վերջնարդյունքներինը կամ կողմնակի գործոններինը: Վավեր է այն գնահատումը, որը գնահատում է այն, ինչի համար նախատեսված է վերջինս: Օրինակ՝ ԺՄԿ-ի որևէ խումբ գնահատելու համար կազմված առաջադրանքը, հնարավոր է, սովորողից պահանջի լեզվական նյութի ընկալում և բանավոր պատասխան: Այդուամենայնիվ, այդպիսի առաջադրանքը հնարավոր է, որ ըստ էության գնահատի սովորողի լեզվական կարողունակությունը, այլ ոչ՝ ժողովրդավարականը, ինչի արդյունքը կլինի այն, որ լեզվական առումով ավելի ունակ աշակերտներին կվերագրվի ժողովրդավարական գիտելիքների ավելի բարձր աստիճան: Նույն կերպ, երբ սովորողների մասնակցության հաճախականությունը չափվում է այնպիսի գնահատմամբ առաջադրանքով, որը պահանջում է սովորողներից համագործակցել, շփվել ու խոսել համադասարանցիների հետ, ապա այդ պարագայում թերևս կգնահատվի այդ սովորողների անհատական կերտվածքը, այլ ոչ՝ ժողովրդավարական կարողունակությունները: Շատ կարևոր է գնահատման այնպիսի մեթոդներ կիրառելը, որոնք կգնահատեն սովորողների ժողովրդավարական կարողունակությունները, այլ ոչ՝ չնախատեսված գործոններ: Միայն վավեր գնահատումներն են թույլ տալիս ճշգրիտ և անկողմնակալ եզրակացություններ

կատարել սովորողի իմացության կամ յուրացրածի մակարդակի վերաբերյալ: Գնահատման ոչ վավեր մեթոդներ չպետք է գործածել, քանի որ այդպիսի մեթոդներն ապակողմնորոշիչ տեղեկություն են տալիս տվյալ կարողունակությունների մասով սովորողների մակարդակի վերաբերյալ: Սա այնուհետ կարող է սովորողների հետագա ուսումնառության ընթացքը փոխել սխալ ուղղությամբ, սասանել նրանց վստահությունը կրթության գործընթացում կամ նույնիսկ վտանգել սովորելը շարունակելու ցանկությունը: Տարածված թյուրընկալում է այն, որ վավերությունը կիրառվում է միայն միավորային գնահատման նկատմամբ: Այդուամենայնիվ, անվավեր կարող են լինել ոչ միայն միավորները կամ գնահատականները: Որակական գնահատականները ևս կարող են անվավեր լինել, եթե գնահատման վրա ներգործեն անտեղի գործոններ:

Հուսալիությունը նշանակում է, որ գնահատումը պետք է տա արդյունքներ, որոնք միասնական/հաջորդական և կայուն են: Հուսալի գնահատումն այն է, որը կախված է իր վերջնարդյունքներից, իսկ այդ վերջնարդյունքները պետք է կրկնօրինակելի լինեն, եթե գնահատման նույն ընթացակարգը կրկին կիրառվի նույն սովորողի նկատմամբ և ուրիշ գնահատողի կողմից: Տարբեր գործոններ կան, որոնք գնահատումն անհուսալի են դարձնում: Օրինակ՝ հնարավոր է գնահատողը հոգնած լինի կամ հնարավոր է, որ գնահատվող կրթական վերջնարդյունքների ճշգրիտ իմաստը հստակ չպատկերացնի: Եթե նույն գնահատողը պակաս հոգնած լիներ կամ ավելի լավ տիրապետեր բոլոր կրթական վերջնարդյունքների նշանակությանը, ապա այլ արդյունքներ կստացվեին: Հուսալիությունը վավերությունից տարբեր հասկացություն է: Նույնիսկ երբ հայտնի է, որ գնահատման մեթոդը հուսալի է, այն կարող է վավեր չլինել (այսինքն՝ այն կարող է լիարժեք չնկարագրել նախատեսվող կրթական վերջնարդյունքի յուրացման աստիճանը, այլ փոխարենը՝ նկարագրել որևէ չնախատեսված գործոն, օրինակ՝ սովորողի լեզվական կարողունակությունները կամ անձնային որակները, ինչի մասին խոսվում է վերևում): Մյուս կողմից, եթե գնահատումն անհուսալի է, այն չի կարող վավեր լինել: Եվ դա այն պատճառով, եթե գնահատման ընթացակարգն անհուսալի է, ապա գնահատման արդյունքի վրա ներգործում է ոչ թե սովորողի կարողունակության մակարդակը, այլ որևէ այլ գործոն (օրինակ՝ գնահատողի աչալրջության աստիճանը): Ինչպես և վավերության պարագայում է, հաճախ կարծիք է հնչում, թե հուսալիությունը վերաբերում է միայն քանակական գնահատումներին: Դա ճիշտ չէ: Որակական գնահատումների արդյունքները ևս կարող են լինել հուսալի կամ անհուսալի: Օրինակ՝ դրանք անհուսալի կարող են լինել այն դեպքում, երբ գնահատողի դատողությունները/տված գնահատականները ժամանակի ընթացքում փոփոխվեն և հետևողական չլինեն:

Հավասարություն նշանակում է, որ գնահատականը պետք է լինի արդար և չպետք է առավելություն տա կամ անբարենպաստ վիճակ ստեղծի որևէ խմբի կամ անհատի համար: Գնահատման անաչառ մեթոդը երաշխավորում է, որ բոլոր սովորողներն՝ անկախ իրենց ժողովրդագրական կամ այլ առանձնահատկություններից, կարողունակության իրենց մակարդակը դրսևորելու հավասար հնարավորություն ունենան: Գնահատման ժամանակ անհավասարություն կարող է առաջանալ տարբեր պատճառներով: Օրինակ, եթե գնահատումը պահանջում է սովորողներից տանն ունենալ տեղեկատվության մեծածավալ աղբյուրների հասանելիություն, ապա դա կարող է խտրական լինել նրանց հանդեպ, ովքեր նման հնարավորություններ չունեն: Եթե գնահատմամբ պահանջվում է, որ սովորողներն ունենան մշակութային մեծամասնություն հանդիսացող խմբի մշակույթի ընդհանուր իմացություն, ապա դա կարող է խտրական լինել փոքրամասնություն կազմող խմբերի նկատմամբ: Չպետք է կիրառել գնահատման այնպիսի մեթոդներ, որոնք անարդարացի են և խտրականություն են դրսևորում առավել անբարենպաստ վիճակում գտնվող կամ տարբեր փոքրամասնությունների պատկանող սովորողների նկատմամբ: Քանի որ ԺՄԿ գնահատումը պետք է կազմի ուսումնառության գործընթացի անքակտելի մաս, որն արտացոլում է ժողովրդավարական արժեքներն ու հզորացնում/ոգևորում է սովորողներին, հետևաբար կարևոր է հարգել հավասարության սկզբունքը:

Թափանցիկություն նշանակում է, որ սովորողները պետք է գնահատման վերաբերյալ նախապես ստանան անթաքույց, լիարժեք և հստակ տեղեկատվություն: Գնահատման թափանցիկ գործընթացն այն գործընթացն է, երբ սովորողները նախապես տեղեկացվում են գնահատման նպատակի, գնահատվող կրթական վերջնարդյունքների մասին, ինչպես նաև կիրառվելիք գնահատման ընթացակարգի և գնահատման չափանիշների մասին: Այն մեթոդները, որոնք սովորողից պահանջում են գուշակել, թե ինչ է իրենցից պահանջվում գնահատման լավ արդյունք ունենալու համար, թափանցիկ չեն: Թափանցիկությունը կարևոր սկզբունք է, որն իրազեկում է ժողովրդավարական գործընթացներն ու ժողովրդավարական մշակույթը: Այդ իսկ պատճառով ԺՄԿ-ի գնահատումը միշտ պետք է կատարվի այս սկզբունքին հետևելով և սովորողների համար հասկանալի մեթոդներ կիրառելով:

Իրագործելիության սկզբունքը նշանակում է, որ կիրառվող գնահատման մեթոդը պետք է լինի իրատեսական՝ հաշվի առնելով համապատասխան ռեսուրսները, ժամանակն ու գործնական սահմանափակումները: Գնահատման իրագործելի ընթացակարգը չի կարող ոչ ողջամիտ պահանջներ առաջադրել՝

սովորողին կամ գնահատողին հասանելի ռեսուրսների կամ ժամանակի առումով: Այն սահմանափակումները, որոնք մեթոդն անիրագործելի են դարձնում, ամենայն հավանականությամբ, այդ մեթոդը կդարձնեն նաև անհուսալի և անվավեր:

Հարգալից վերաբերմունք

Հարգալից վերաբերմունքի հիման վրա կառուցված գնահատումը կարող է մոտիվացնել, որ գնահատվողներն ընդունեն և ըմբռնեն գնահատումն ու դրա նպատակները: Գնահատման ընթացակարգերում միշտ պետք է հարգված լինեն գնահատվող սովորողի արժանապատվությունն ու իրավունքները: /Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան (2016թ.), Ատելության խոսք, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ. www.echr.coe.int/Documents/FS_Hate_ speech_ENG.pdf. կայքում: էջ 74/:

Հարգալից վերաբերմունքի սկզբունքը չի ներառում միայն սովորողների՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, այլև ենթադրում է նաև հարգանք սովորողների արժանապատվության նկատմամբ: Որպես այդպիսին, գնահատումներում նաև պետք է պահպանվեն հետևյալ ընդհանուր կանոնները.

► սովորողներին չպետք է շարունակական սթրեսի ենթարկել՝ անընդհատ գնահատվելու միջոցով.

► սովորողներն ունեն մասնավոր կյանքի և գաղտնիության իրավունք, հատկապես իրենց արժեքների և մոտեցումների առնչությամբ.

► գնահատման արդյունքները սովորողներին հաղորդելիս նրբանկատություն է պահանջվում.

► գնահատման արդյունքում՝ հետադարձ կապով սովորողներին կարծիք հայտնելիս պետք է կենտրոնանալ ոչ թե բացասական, այլ դրական արդյունքների, ոչ թե սովորողի թերությունների, այլ հիմնականում նրա ձեռքբերումների վրա.

► կարող են լինել դեպքեր և հարցեր, երբ գնահատում չպետք է կատարվի, քանի որ այդ հարցերը կամ թեմաները չափազանց նուրբ են տվյալ սովորողների համար.

► նաև հարկ է հատուկ նախազգուշական միջոցներ ձեռնարկել այն դեպքերում, երբ վերջնարդյունքների գնահատումը օգտագործվելու են որոշելու՝ տվյալ սովորողի կրթության հաջորդ մակարդակում ուսումը շարունակելու հարցը:

Եզրակացություն

Ինչպիսի՞ հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը: Այս հարցի պատասխանի կարևոր մաս է կազմում այն կրթությունը, որը նրանց տալիս ենք այսօր: Կրթությունն առանձնահատուկ դեր ունի ապագայի ձևավորման գործում և արտացոլում է այն տեսակը, որն ուզում ենք ունենալ հետագա սերունդների համար:

Մեր ապագա հասարակություններում որպես հիմնարար սկզբունք և գլխավոր հենասյուներից մեկը ժողովրդավարությունն է, իսկ ժողովրդավարական մշակույթի համար կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակի ելակետն այն համոզմունքն է, որ կրթական համակարգերի, դպրոցների ու համալսարանների հիմնական առաքելություններից մեկը պետք է լինի ժողովրդավարական քաղաքացիության նախապատրաստումը: Սա նշանակում է հետևել, որ սովորողներն իմանան և հասկանան իրենց առջև ծառացած մարտահրավերներն ու իրենց որոշումների հետևանքները, **թե ի՞նչ են իրենք ի վիճակի անելու և ի՞նչ չպետք է անեն:**

Այս ամենի համար նրանց պետք է ոչ միայն գիտելիք, այլ նաև համապատասխան կարողունակություններ/կոմպետենցիաներ, իսկ ԺՄԿ գնահատումն այն միջոցն է, որը կնպաստի սովորողների՝ իրենց իսկ ուսման գործընթացի տերը լինելու զգացողության ձևավորմանն ու զարգացմանը:

Գրականության ցանկ

1. Վեսա Պուրոկուրու, Համագործակցային ուսուցում. Վերպատրաստողի ուղեցույց-ձեռնարկ: - Եր. Անտարես, 2006 – 96 էջ:
2. Ս. Է. Հակոբյան .Երկրաչափություն 10-12. ՈՒսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար. –Եր.: Տիգրան Մեծ, 104 էջ:
3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցում ներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2017:
4. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՇՐՋԱՆԱԿ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ
www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf.
www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/crc.pdf.